

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐՏԻ ՄԱՐԶԻ
ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Արարատի մարզ, Նարեկ համայնք
Հեռ./099-43-57-45/, էլ. փոստ՝ narekhamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

08 նոյեմբերի, 2013 թվական, N 32

ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի
պահանջներով.

Համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Համայնքի 2013 թվականի բյուջեում կատարել հետևյալ
փոփոխությունները.

- ա) Բյուջեի եկամտային մասում՝ գույքահարկ փոխադրամիջոցներից -
ավելացնել 250,0 հազար դրամ:
- բ) Սոցիալապես անապահով ընտանիքների աջակցության համար.
Սոցիալապես անապահով անձանց աջակցություն գործ. դաս.
10.07.01.54, 4729 հոդվածին տալ 250,0 հազար դրամ:
- գ) Տարեմուտի միջոցառում կազմակերպելու համար.
Ջրային կառույցների շահագործում և պահպանում, գործառնական
դասակարգում 06.06.01.55, 4241 հոդվածից 130,0 հազար դրամ
տեղափոխել մշակույթային միջոցառումներ գործ. դաս. 08.02.04.51,
4269 հոդվածին:

դ) Գերեզմանոցի խմելու ջրագծի կառուցման համար.
Սանիտարական մաքրում, գործ. դաս. 05.01.01.51, 5112 հողվածից
պակասեցնել 550,0 հազար դրամ և ավելացնել գործ. դաս. 06.06.01.55
ջրային կառույցների շահագործում և պահպանում 5112 հողվածին:

Ավագանու անդամներ՝ Կ.Մովսիսյան

Կողմ *[Signature]*

Պ.Գևորգյան

Կողմ *[Signature]*

Ս.Վարդանյան

Կողմ *[Signature]*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՆԱԿԱՐ



Գ.Հակոբյան
/ անուն ազգանուն /



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐՏԻ ՄԱՐԶԻ
ՆԱՐԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Արարատի մարզի Նարեկ համայնք
Հեռ./099-43-57-45/, էլ փոստ. narekhamaynq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

08 նոյեմբերի, 2013 թվական, N 33

ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետի դրույթներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի, 38-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով.

Համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Թույլատրել համայնքի ղեկավարին օտարելու.

ա) Աճուրդային կարգով- բնակավայրի հողատարածք, բնակելի կառուցապատման, մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100%-ի չափով.

Անդրանիկի N7/1 – 0,19859 հա, ծածկագիրը՝ 03-063-0024-0009

բ) Աճուրդային կարգով- գյուղ. նշանակության հողատարածք, գործառնական նշանակությունը՝ վարելահող, մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100%-ի չափով.

0,40176 հա, ծածկագիրը՝ 03-063-0136-0072:

Ավագանու անդամներ՝ Կ.Մովսիսյան


հոդ *[Signature]*

Պ.Գևորգյան

հոդ *[Signature]*
հոդ *[Signature]*

Ս.Վարդանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԳԱՐ



Գ.Հակոբյան
/ անուն ազգանուն /